# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Երանոս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Երանոս, (0262) 6-00-73, (093) 33-07-37
yeranos.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՄԱՅԻՍԻ 2015թվականի N 18-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածով և 32 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

որոշում եմ

1. 2015 թվականի մայիսի 27-ին՝ ժամը 16:00-ին, Երանոսի գյուղապետարանի վարչական շենքում հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով՝

1) համայնքի 2015 թվականի բյուջեի հոդվածներում փոփոխություն կատարելու մասին

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի պատմամշակութային հուշարձանների քարտեզում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու նրանց պահպանական գոտիների սահմանների ոչ ճիշտ տեղադրության պատճառով հայտնաբերված թերությունները ուղղելու նպատակով լիազոր մարմին ներկայացնելու մասին

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծում համայնքային սեփականություն հանդիսացող երկու միավոր գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխման նպատակով լիազոր մարմին ներկայացնելու մասին

4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծում <<Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 10 միավոր գյուղատնտեսական նշանակության վարելահող հողամասերի

նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխման նպատակով լիազոր մարմին ներկայացնելու մասին

5) համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի գույքագրման փաստաթղթերում կատարված համապատասխան փոփոխությունները հաստատման ներկայացնելու մասին

2. Աշխատակազմի քարտուղար Ժ. Փինաչյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսվող արտահերթ նիստի անցկացման մասին իրազեկել համայնքի ավագանու անդամներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՊԵՏՆԱԿ ՄՈՎՍԵՍՅԱՆ

20 15 թ.մայիսի 26
գ.Երանոս